ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 28.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/11

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ

Բողոք բերող՝ «Վիոլա» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

Բողոքաբեր՝ «Վիոլա» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Պարանյանի, Հ. Ենգոյանի

Պատվիրատու՝ «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸի ներկայացուցիչ՝ Հ. Սարգսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՍԲԿ-ԳՀԱՊՁԲ-2020/5» ծածկագրով գնանշման հարցում, քիմիական նյութերի ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Վիոլա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 05.02.2020թ.-ի ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերություն ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել «ՍԲԿ-ԳՀԱՊՁԲ-2020/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել գնման ընթացակարգը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 05.02.2020թ.-ի և նույն օրը կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, իսկ 13.02.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Բողոքի քննությունն ավարտվել է 13.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 28.02.2020թ.-ին:

2. «Վիոլա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Վիոլա» ՍՊԸ-ն 05.02.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Ստեփանավանի բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կարիքների համար՝ «Քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՍԲԿ-ԳՀԱՊՁԲ-2020/5» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որով հայտերի բացումը տեղի է ունեցել 2020թ. հունվարի 31-ին, ժամը 12:00-ին:

Սույն Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Վիոլա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Բողոքաբեր), մասնակցության հայտ է ներկայացրել 30.01.2020թ., և հայտի փաթեթը ներբեռնել է ARMEPS համակարգ՝ 30.01.2020թ. ժամը 20:50:

Հայտը ներբեռնելու արդյունքում «Վիոլա» ՍՊԸ-ն իր էլեկտրոնային հասցեին ARMEPS համակարգից ստացել է ոչ ավտոմատ ծանուցում առ այն, որ ներկայացված հայտը բեռնվել է համակարգ (ծանուցման արտատպումը կցվում է սույն բողոքին):

Ծանուցումը ունի հետևյալ բովանդակությունը.

«-----Original Message-----

From:[//e.mail.ru/compose/?mailto=mailto%3ainfo@armeps.am]info@armeps.am [mailto:[//e.mail.ru/compose/?mailto=mailto%3ainfo@armeps.am]info@armeps.am]

Sent: Thursday, January 30, 2020 8:51 PM

To: [//e.mail.ru/compose/?mailto=mailto%3ainfo@armeps.am]info@armeps.am

Subject: Ավտոմատ ծանուցում ARMEPS համակարգից - [ՄՀ. 5708290] հայտը բեռնվեց: ARMEPS համակարգ - մրցույթային փաթեթը բեռնվել է:

Փաթեթի բեռնում:

Հայտ՝

ՄՀ. Ստեփանավանի բժշկական կենտրոն ՓԲԸ 2020 թ. քիմ նյութերի գնում Ստացականի հերթական համար՝ 000113708 Տեղեկություն. մրցույթային փաթեթը բեռնվել է:

Դուք կարող եք հասնել Մրցույթի բաժնին հետևյալ կապուղով:

http://www.armeps.am/epps/cft/viewETenders.do?resourceId=5708290

Դուք ստացել եք սույն ծանուցումը, քանի որ բաժանորդագրված եք տվյալ ՄՀ-ին

առնչվող ավտոմատ ծանուցումներին:»:

Այնուհետև հայտերը բացվելուց հետո ստանալով նշված արձանագրությունը՝ Բողոքաբերը մուտք է գործել ARMEPS համակարգ և պարզել, որ տվյալ Ընթացակարգին «Վիոլա» ՍՊԸ-ն որպես մասնակից առկա է, սակայն նրա անվան դիմաց բացակայում է ներբեռնված հայտի փաթեթը՝ փաթեթը ընդհանրապես բացակայում է (ARMEPS համակարգից արտատպումը կցվում է:)

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Վիոլա» ՍՊԸ-ն ARMEPS համակարգի ոչ լիարժեք, թերի աշխատելու պատճառով զրկվել է իր մասնակցության իրավունքից լիարժեք օգտվելու հնարավորությունից: Փաստացիորեն հայտը ներբեռնելու արդյունքում «Վիոլա» ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցեին ARMEPS համակարգից ստացվել է ոչ ավտոմատ ծանուցում առ այն, որ ներկայացված հայտը բեռնվել է համակարգ, և նման պայմաններում հայտերը բացվելուց հետո պարզվել է, որ հայտի փաթեթ ընդհանրապես

առկա չէ, ինչը, Բողոքաբերի կարծիքով, հանդիսանում է ARMEPS համակարգի թերի աշխատելու արդյունք, քանի որ նման բովանդակությամբ ծանուցում ստանալու արդյունքում այնուամենայնիվ գործ ունենք չներբեռնված հայտի հետ:

Գտնում ենք, նման պայմաններում Պատվիրատուն կարող է կնքել պայմանագիր ավելի բարձր գին առաջարկած մասնակից հետ, ինչը էական վնաս կպատճառի բյուջեին և կհանդիսանա բյուջեի միջոցների անհիմն վատնում:

Նման փաստական հանգամանքների պայմաններում, գտնում ենք, որ Ստեփանավանի բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կարիքների համար՝ «Քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՍԲԿ-ԳՀԱՊՁԲ-2020/5» ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում տեղի է ունեցել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետով սահմանված պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքների խախտում, ինչ էլ իր հերթին հանգեցրել է Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված մասնակցի մասնակցության իրավունքի իրականացման սահմանափակմանը կամ ոչ լիարժեք իրականացմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման...:»:

Ելնելով վերոգրյալից Ընկերություն ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել «ՍԲԿ-ԳՀԱՊՁԲ-2020/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել գնման ընթացակարգը:

Ի լրումն ներկայացրած բողոքի, «Վիոլա» ՍՊԸ-ն 14.02.2020թ.-ի ներկայացված լրացմամբ հայտնել է հետրյալը.

««Վիոլա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/11 ծածկագրով բողոքի քննության վերաբերյալ 13.02.2020թ. նշանակված նիստի ժամանակ ՀՀ գնումների հետ

կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի կողմից պահանջվեց ներկայացնել «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից <<ՍԲԿ-ԳՀԱՊՁԲ-2020/5>> ծածկագրով գնանշման հարցմանը ներկայացված ամբողջական գնային առաջարկը և armeps.am համակարգի կողմից «Վիոլա» ՍՊԸ-ի էլ. փոստի հասցեին ուղարկված նամակի էլեկտրոնային արտատպումը, որով երևում է, որ armeps.am համակարգը հայտնել է, որ մրցույթային փաթեթը բեռնվել է:

Հարգելի բողոքներ քննող անձ, խնդրում են «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը քննելիս՝ հիմքում դնել ոչ թե «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից հայտը ներբեռնելու արդյունավետության հարցի քննարկումը, այլ այն կարևորագույն փաստը, որ armeps.am համակարգի թերի աշխատանքի շնորհիվ անգամ հայտը ներբեռնելիս խնդիր առաջանալու դեպքում armeps.am համակարգից մասնակցին ուղարկվում է ծանուցում, որ հայտը հաջողությամբ ներբեռնվել է: Մինչդեռ armeps.am համակարգի նման թերի կարգաբերումը ուղղակիորեն առաջացնում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով երաշխավորված մասնակիցների մասնակցության իրավունքի խախտում, քանի որ նման բովանդակությամբ ծանուցումը թյուրիմացության մեջ է գցում մասնակցին՝ հավաստացիացնելով վերջինիս, որ նրա հայտը հաջողությամբ ներբեռնվել է և ոչ մի խնդիր առկա չէ:

Կարծում ենք, որ Ձեր կողմից համապատասխան որոշմամբ մասնակցի մասնակցության իրավունքի վերականգնումը կստիպի armeps.am համակարգը սպասարկող ընկերությանը վերջապես վերացնել համակարգում առկա խնդիրը՝ վերոհիշյալ ծանուցումների մասով:»:

Ընկերությունը 25.02.2020թ.-ին ներկայացված բողոքի լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 14.02.2020թ. հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ ըստ Armeps համակարգը սպասարկող ընկերությունը հայտնել է, որ նշված ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտի փաթեթը չի ապակոդավորվում: Ըստ այդ ընկերության՝ տվյալ դեպքում գեներացվել է սխալ բանալի, որը պիտանի չէ էլեկտրոնային գնումների Armeps համակարգում ապակոդավորում իրականացնելու համար՝ հայտի փաթեթի պատրաստման՝ ֆայլերի կցագրման, փաթեթավորման և/կամ ներբեռնման շրջանակում գործողությունները մասնակցի կողմից սահմանված պահանջներին անհամապատասխան կատարված լինելու կամ հեռահաղորդակցման անհայտ սխալի հանգամանքով պայմանավորված:

Նույն գրությամբ հայտնվել է, որ հայտի փաթեթի ներբեռնման մասին համակարգի կողմից տրամադրած ավտոմատ ծանուցումը փաստում է այն մասին, որ այն ներբեռնվել է համակարգ և առկա է տվյալների բազայում, սակայն քանի որ հայտը բեռնելու պահից մինչև բացման պահը՝ համակարգի անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված, այն ունի սահմանափակ հասանելիություն՝ վերջինիս ոչ պիտանի լինելը պարզվում է միայն բացումից հետո՝ ապակոդավորման արդյունքում:

Վերոհիշյալի հետ կապված հայտնում ենք հետևյալը.

Նախ, պետք է փաստել, որ հայտի փաթեթը չներբեռնվելու մասին եզրակացություն է տվել մի ընկերություն, որը, որպես Armeps համակարգը սպասարկող, ուղղակիորեն շահագրգռված է ստեղծված խնդիրը ներկայացնելու որպես ոչ իր մեղքով առաջացած, քանի որ հակառակ դեպքում կասկածի տակ կդրվի Armeps համակարգի սպասարկման արդյունավետությունը:

Բացի այդ, գրությամբ տրված եզրակացությամբ ընդհանրապես անհասկանալի է դառնում, թե ինչում է կայանում խնդիրը և որն է դրա առաջացման պատճառը, քանի որ խոսելով սխալ բանալիի գեներացման մասին, չի տրվում բացատրություն դրա էության վերաբերյալ: Ավելին, ստեղծված իրավիճակի պատճառը նշվում է վերացական. վերոհիշյալը կարող է լինել արդյունք ֆայլերի կցագրման, փաթեթավորման և/կամ ներբեռնման շրջանակում գործողությունները մասնակցի կողմից սահմանված պահանջներին անհամապատասխան կատարված լինելու կամ հեռահաղորդակցման անհայտ սխալի հանգամանքով պայմանավորված: Նշվածից, ի վերջո, անհասկանալի է, թե խնդիրը ինչում է կայանում և ինչն է հանգեցրել դրան:

Բացի այդ, շատ կարևոր է նաև այն, որ գրությամբ հաստատվել է, որ հայտի փաթեթի ներբեռնման մասին համակարգի կողմից տրամադրած ավտոմատ ծանուցումը փաստում է այն մասին, որ այն ներբեռնվել է համակարգ և առկա է տվյալների բազայում: Միևնույն ժամանակ գրությամբ նշվել է, որ քանի որ հայտը բեռնելու պահից մինչև բացման պահը՝ վերջինիս ոչ պիտանի լինելը պարզվում է միայն բացումից հետո՝ ապակոդավորման արդյունքում:

Վերոհիշյալի հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում են «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը քննելիս՝ հիմքում դնել ոչ թե «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից հայտը ներբեռնելու արդյունավետության հարցի քննարկումը, այլ այն կարևորագույն փաստը, որ armeps.am համակարգի թերի աշխատանքի շնորհիվ անգամ հայտը ներբեռնելիս խնդիր

առաջանալու դեպքում armeps.am համակարգից մասնակցին ուղարկվում է ծանուցում, որ հայտը հաջողությամբ ներբեռնվել է: Մինչդեռ armeps.am համակարգի նման թերի կարգաբերումը ուղղակիորեն առաջացնում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով երաշխավորված մասնակիցների մասնակցության իրավունքի խախտում, քանի որ նման բովանդակությամբ ծանուցումը թյուրիմացության մեջ է գցում մասնակցին՝ հավաստացիացնելով վերջինիս, որ նրա հայտը հաջողությամբ ներբեռնվել է և ոչ մի խնդիր առկա չէ:

Կարծում ենք, որ Ձեր կողմից համապատասխան որոշմամբ մասնակցի մասնակցության իրավունքի վերականգնումը կստիպի armeps.am համակարգը սպասարկող ընկերությանը վերջապես վերացնել համակարգում առկա խնդիրը՝ վերոհիշյալ ծանուցումների և հայտերը ներբեռնելու արդյունավետության մասով:»:

3. <u>«Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 06.02.2020թ.-ին գրությամբ դիմել է «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից 05.02.2020թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 10.02.2020թ.-ին թիվ 20-22 գրությամբ հայտնել է, որ «Ստեփանավանի բժշկական կենտրոնի» ՓԲԸ-ի կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՍԲԿ-ԳՀԱՊՁԲ-2020/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ և 31.01.2020թ.-ին ժամը 12:00-ին տեղի է ունեցել հայտերի բացում: Armeps համակարգում մասնակցելու հայտ ներկայացվել էր նաև «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից, սակայն հայտի փաթեթը ներբեռնված չէր՝ բացակայում էր:

Պատվիրատուն խնդրել է «Ստեփանավանի բժշկական կենտրոնի» ՓԲԸ-ի բնականոն աշխատանքը չխաթարելու համար հարցին տալ շտապ լուծում, քանի որ ցանկում ներառված նյութերի ձեռքբերումը հրատապ է:

4. <u>ԳԲՔԱ-LO-2020/11 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով 24.01.2020թ.-ին հայտարարվել է «ՍԲԿ-ԳՀԱՊՁԲ-2020/5» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման նիստի օր է սահմանվել 31.01.2020թ.-ին ժամը 12:00-ին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ նաև Հանձնաժողով) 31.02.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Armeps համակարգի (այսուհետ' Համակարգ) միջոցով հայտ է ներկայացրել նաև «Վիոլա» ՍՊԸ-ն, սակայն Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերում առկա չեն հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Բողոքներ քննող անձը 14.02.2020թ.-ին թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/4014-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և խնդրել է հայտնել, արդյո՞ք հնարավոր է Ընկերության կողմից հայտի փաթեթով ներկայացված հավելվածները համակարգում չարտացոլվելու պատճառ հանդիսանալ www.armeps.am համակարգի խափանումներով աշխատելը, թե՞ ոչ: Եթե ոչ, ապա խնդրում եմ հայտնել «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթը համակարգում թերի բեռնվելու պատճառների մասին տեղեկատվություն:

Ի պատասխան վերոնշյալ գրության, ՀՀ ֆինանսների նախարարությունը 21.02.2020թ.-ին թիվ Ն/26-1/4112-2020 գրությամբ հայտնել է, որ «Վիոլա» ՍՊԸ-ի բարձրացրած խնդրի կապակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը:

Վերջինս տեղեկացրել է, որ գրության մեջ նշված ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտի փաթեթը չի ապակոդավորվում: Տվյալ դեպքում գեներացվել է սխալ բանալի, որը պիտանի չէ էլեկտրոնային գնումների Armeps համակարգում ապակոդավորում իրականացնելու համար՝ հայտի փաթեթի պատրաստման՝ ֆայլերի կցագրման, փաթեթավորման և/կամ ներբեռնման շրջանակում գործողությունները մասնակցի կողմից սահմանված պահանջներին անհամապատասխան կատարված լինելու կամ հեռահաղորդակցման անհայտ սխալի հանգամանքով պայմանավորված:

Ինչ վերաբերում է գրությամբ նշված ժամանակահատվածում համակարգի խափանումներով աշխատելուն, ապա հայտնում ենք, որ armeps համակարգը աշխատել է անխափան, որի միջոցով գրությամբ նշված ընթացակարգի հայտարարության և հրավերի հրապարակման օրվանից՝ 24.01.2020թ.-ից մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրը՝ 31.01.2020թ.-ը համակարգում իրականացվել է թվով 874 հայտի փաթեթի ներբեռնում՝ թվով 199 ընթացակարգերի համար, մասնավորապես՝ 30.01.2020թ.-ին իրականացվել է թվով 148 հայտի բեռնում, որոնցից գրությամբ նշված ընթացակարգի համար ներբեռնվել է 11 հայտ, որոնք հասանելի են armeps.am կայքի «Հայտեր» բաժնում:

Տեղեկացնում ենք նաև, որ հայտի փաթեթի ներբեռնման մասին համակարգի կողմից տրամադրած ավտոմատ ծանուցումը փաստում է այն մասին, որ այն ներբեռնվել է համակարգ և առկա է տվյալների բազայում, սակայն քանի որ հայտը բեռնելու պահից մինչև բացման պահը՝ համակարգի անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված, այն ունի սահմանափակ հասանելիություն՝ վերջինիս ոչ պիտանի լինելը պարզվում է միայն բացումից հետո՝ ապակոդավորման արդյունքում:

https://armeps.am/ppcm/ կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «ՍԲԿ-ԳՀԱՊՁԲ-2020/5» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների շարքում առկա է նաև «Վիոլա» ՍՊԸ-ն, սակայն վերջինիս հայտը փաթեթը հնարավոր չէ բեռնել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից 05.02.2020թ.-ի-ին ներկայացված բողոքն անհիմն է, ենթակա է մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ... հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ

աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից հաստատած դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Հայտերը գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովի կողմից ներկայացված հայտերը մերժվում են, քանի որ առկա չէ օրենքով սահմանված կարգով գնային առաջարկի շտկման հնարավորություն:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

«Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով 24.01.2020թ.-ին հայտարարվել է «ՍԲԿ-ԳՀԱՊՁԲ-2020/5» ծածկագրով գնման ընթացակարգ և հայտերի ներկայացման ու հայտերի բացման նիստի օր է սահմանվել 31.01.2020թ.-ին ժամը 12:00-ին:

Հանձնաժողովի 31.02.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Armeps համակարգի միջոցով հայտ է ներկայացրել նաև «Վիոլա» ՍՊԸ-ն, սակայն Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերում առկա չեն հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Բողոքներ քննող անձը 14.02.2020թ.-ին թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/4014-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և խնդրել է հայտնել, արդյո՞ք հնարավոր է Ընկերության կողմից հայտի փաթեթով ներկայացված հավելվածները համակարգում չարտացոլվելու պատճառ հանդիսանալ www.armeps.am համակարգի խափանումներով աշխատելը, թե՞ ոչ: Եթե ոչ, ապա խնդրում եմ հայտնել «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթը համակարգում թերի բեռնվելու պատճառների մասին տեղեկատվություն:

Ի պատասխան վերոնշյալ գրության, ՀՀ ֆինանսների նախարարությունը 21.02.2020թ.-ին թիվ Ն/26-1/4112-2020 գրությամբ հայտնել է, որ «Վիոլա» ՍՊԸ-ի բարձրացրած խնդրի կապակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը:

Վերջինս տեղեկացրել է, որ գրության մեջ նշված ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտի փաթեթը չի ապակոդավորվում: Տվյալ դեպքում գեներացվել է սխալ բանալի, որը պիտանի չէ էլեկտրոնային գնումների Armeps համակարգում ապակոդավորում իրականացնելու համար՝ հայտի փաթեթի պատրաստման՝ ֆայլերի կցագրման, փաթեթավորման և/կամ ներբեռնման շրջանակում գործողությունները մասնակցի կողմից սահմանված պահանջներին անհամապատասխան կատարված լինելու կամ հեռահաղորդակցման անհայտ սխալի հանգամանքով պայմանավորված:

Ինչ վերաբերում է գրությամբ նշված ժամանակահատվածում համակարգի խափանումներով աշխատելուն, ապա հայտնում ենք, որ armeps համակարգը աշխատել է անխափան, որի միջոցով գրությամբ նշված ընթացակարգի հայտարարության և հրավերի հրապարակման օրվանից՝ 24.01.2020թ.-ից մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրը՝ 31.01.2020թ.-ը համակարգում իրականացվել է թվով 874

հայտի փաթեթի ներբեռնում՝ թվով 199 ընթացակարգերի համար, մասնավորապես՝ 30.01.2020թ.-ին իրականացվել է թվով 148 հայտի բեռնում, որոնցից գրությամբ նշված ընթացակարգի համար ներբեռնվել է 11 հայտ, որոնք հասանելի են armeps.am կայքի «Հայտեր» բաժնում:

Տեղեկացնում ենք նաև, որ հայտի փաթեթի ներբեռնման մասին համակարգի կողմից տրամադրած ավտոմատ ծանուցումը փաստում է այն մասին, որ այն ներբեռնվել է համակարգ և առկա է տվյալների բազայում, սակայն քանի որ հայտը բեռնելու պահից մինչև բացման պահը՝ համակարգի անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված, այն ունի սահմանափակ հասանելիություն՝ վերջինիս ոչ պիտանի լինելը պարզվում է միայն բացումից հետո՝ ապակոդավորման արդյունքում:

https://armeps.am/ppcm/ կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «ՍԲԿ-ԳՀԱՊՁԲ-2020/5» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների շարքում առկա է նաև «Վիոլա» ՍՊԸ-ն, սակայն վերջինիս հայտը փաթեթը հնարավոր չէ բեռնել:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ընթացակարգին «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթը չի ապակոդավորվում, քանի որ տվյալ դեպքում գեներացվել է սխալ բանալի, որը պիտանի չէ էլեկտրոնային գնումների Armeps համակարգում ապակոդավորում իրականացնելու համար: Տվյալ պարագայում խնդիրը առաջացել է հայտի փաթեթի պատրաստման՝ ֆայլերի կցագրման, փաթեթավորման և/կամ ներբեռնման շրջանակում գործողությունները Ընկերության կողմից սահմանված պահանջներին անհամապատասխան կատարված լինելու կամ հեռահաղորդակցման անհայտ սխալի հանգամանքով պայմանավորված:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Վիոլա» ՍՊԸ-ն գեներացրել է սխալ բանալի, որի արդյունքում հայտի փաթեթը չի ապակոդավորվել, որպես հետևանք բացակայել են հրավերով պահանջվող փաստաթղթերը՝ այդ թվում և գնային առաջարկը, որի բացակայության պայմաններում ներկայացված հայտն ենթակա է մերժման՝ առանց շտկման հնարավորության ընձեռնման:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Վիոլա» ՍՊԸ-ի կողմից 05.02.2020թ.-ի-ին թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/11 ծածկագրով ներկայացրած բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ